У 3,8% пациенток при эхографическом исследовании были выявлены участки ткани эндометрия, типичной локализацией которых была область трубных углов. У остальных пациенток (96,2%) полость матки определялась в виде тонкой гиперэхогенной полоски. Гистерэктомия была проведена двум пациенткам (3,8%) по поводу регенерации эндометрия и рецидивирующих маточных кровотечений.

*Заключение:* Электродеструкция при гиперпластических процессах эндометрия у женщин перименопаузального возраста по своей эффективности сравнима с радикальным хирургическим лечением, является более экономичной и безопасной и может быть рекомендована для широкого практического применения в лечебных учреждениях гинекологического профиля.

*Ключевые слова:* электродеструкция эндометрия, гиперплазия эндометрия.

Меноррагия, являясь основным симптомом гиперпластических процессов эндометрия, нередко приводит к удалению матки у женщин перименопаузального возраста. Около 20-25% гистерэктомий в мире выполняется по поводу чрезвычайно обильных и длительных менструаций. Гистерэктомия – сложная и наиболее травматичная из гинекологических операций, она сопровождается значительным числом осложнений и высокой частотой функциональных расстройств в послеоперационном периоде [1].

Традиционное гормональное лечение гиперпластических процессов эндометрия в перименопаузе характеризуется высокой частотой рецидивов, а также затрудненным выбором гормонального препарата из-за большого числа сопутствующих экстрагенитальных заболеваний у данного контингента больных [3].

С внедрением в гинекологическую практику гистероскопа при гиперпластических процессах слизистой оболочки тела матки стало возможным разрушать с помощью электрического тока только источник патологической пролиферации – эндометрий, сохранив при этом матку [4].

Электродеструкция или абляция эндометрия выполняется как альтернатива гистерэктомии

при неэффективности медикаментозных методов лечения гиперплазии слизистой оболочки матки у женщин перименопаузального возраста. Электродеструкция эндометрия может быть операцией выбора для пациенток с ожирением и отягощенным со матическим анамнезом (заболевания сердечно-сосудистой системы, сахарный диабет, хронические заболевания почек и др.), у которых имеются противопоказания к гормональной терапии, а гистерэктомия сопряжена с высоким риском интра- и послеоперационных осложнений [2, 5].

**Цель исследования**

Целью настоящего исследования явилось изучение эффективности электродеструкции эндометрия по данным клинического и трансвагинального ультразвукового исследования.

**Материал и методы исследования**

Электродеструкция эндометрия была выполнена у 53 пациенток с различными морфологическими формами гиперпластических процессов эндометрия.

Средний возраст составил 47±0,4 лет и колебался от 40 до 54 лет. Большинство пациенток – 62,3% вошли в возрастную группу от 46 до 50 лет. Анализ перенесенных инфекционных заболева-

ний показал, что наиболее распространенными являлись корь (88,7%), ветряная оспа (64,2%), паротит (22,6%), гепатит (22,6%). Из перенесенных оперативных вмешательств наиболее часто встречались аппендэктомии (39,6%), тонзилэктомии (26,4%) и холецистэктомии (7,6%).

Из сопутствующих экстрагенитальных заболеваний наиболее часто наблюдались гипертоническая болезнь (32,1%), варикозное расширение вен (30,2%), заболевания печени и желчевыводящих путей (17,0%).

В структуре нарушений менструального цикла доминировали длительные менструации с обильной кровопотерей (45,3%), ациклические кровотечения (34,0%), менструации, переходящие в кровотечение (20,7%).

В анамнезе всех больных были эпизоды маточных кровотечений и безуспешное гормональное лечение. У 20,8% пациенток по поводу рецидивирующих маточных кровотечений было произведено 2 и более выскабливаний полости матки. Гиперпластические процессы сочетались с другой гинекологической патологией: миома матки величиной до 7-8 недельной беременности (45,3%), хронический сальпингоофорит (34,0%), хронический эндометрит (26,4%). При объективном осмотре ожирение выявлено у 41,5% пациенток, а избыточная масса тела у 35,9%.

Предоперационная подготовка больных для абляции эндометрия проводилась двумя путями. В зависимости от этого пациентки были разделены на 2 подгруппы.

I подгруппа – 20 больных, подготовка проводилась с помощью гормональной супрессии эндометрия – 17-ОПК по 500 мг вводился внутримышечно 2 раза в неделю в течение 6-8 недель. Перед назначением 17-ОПК всем пациенткам проводили отдельное выскабливание цервикального канала и полости матки с последующим гистологическим исследованием полученного материала.

II подгруппа – 33 пациентки, подготовка которых к абляции заключалась в механическом удалении функционального слоя эндометрия во время раздельного выскабливания полости матки и цервикального канала за 3-5 дней до электродеструкции эндометрия.

Полученный материал исследовался гистологически: железистая гиперплазия (43,4%), железистая гиперплазия с воспалением (13,2%), железисто-фиброзный полип (15,1%) и железисто-кистозный полип на фоне железисто-кистозной гиперплазии эндометрия (28,3%). Электродеструкция эндометрия выполнялась гистероскопом фирмы Karl Storz (Германия) с длительной циркуляцией жидкости и 12-градусной оптической системой. В качестве манипуляторов применяли 90-градусную проволочную петлю и шариковый электрод диаметром 3 мм. Источником тока служил генератор Autocon-200. Во всех случаях использовался режущий ток мощностью 80-100 Вт. Растяжение полости матки осуществляли раствором глицина или 5% раствором глюкозы с использованием гистеромата фирмы Karl Storz модель Namou endomat при давлении 100-150 мм рт. ст. Электродеструкция проводилась согласно стандартной методике: петлевым электродом при мощности тока 80-100 Вт в режиме резания удалялся эндометрий на глубине 3 мм в области дна, задней и передней стенок. Затем шариковым электродом при мощности тока 60-76 Вт в режиме коагуляции обрабатывались резецированные участки, а также маточные углы и боковые стенки. При коагуляции стенок матки не доходили до внутренне-го зева 1 см.

**Результаты исследования и обсуждение**

Оценка результатов абляции эндометрия проведена через 3,6 и 12 месяцев.

Эффективным считалось лечение, при котором получена стойкая аменорея или скудные кровянистые выделения – гипоменорея. При обычном течении послеоперационного периода после абляции эндометрия кровяные выделе-

ния разной степени интенсивности продолжались до 7-28 дней после операции. Кровянистые выделения на 17-28 день связаны с отторжением в эти сроки струпа, сформировавшегося на стенках полости матки в результате коагуляционного некроза тканей при воздействии электрического тока.

Анализ менструальной функции выявил, что к 3 месяцам после абляции эндометрия у 77,4% больных отмечалась аменорея, у 22,6% – гипоменорея. К 12 месяцам наблюдения аменорея отмечалась у 84,9% больных, гипоменорея у 15,1%.

Через 3 месяца наблюдения после абляции у 3,8% пациенток при эхографическом исследовании были выявлены участки ткани эндометрия, типичной локализацией которых была область трубных углов. У остальных пациенток (96,2%) полость матки определялась в виде тонкой гиперэхогенной полоски толщиной 1-3 мм. Поздние послеоперационные осложнения были выявлены у 7,6% больных: эндометрит (1,9%), кровотечение (5,7%).

Эндометрит был выявлен у одной больной на 21 сутки после абляции. Был проведен курс антибактериальной терапии с положительным эффектом. Маточное кровотечение наблюдалось на 21-28 сутки и совпадало по срокам со временем отторжения струпа со стенок матки. Кровотечение останавливалось гемостатическими препаратами.

В течении периода наблюдения радикальная операция – гистерэктомия была проведена двум пациенткам (3,8%) по поводу регенерации эндометрия и рецидивирующих маточных кровотечений.

Теоретической предпосылкой для внедрения в клиническую практику электродеструкции эндометрия является известный факт о возможном сохранении биологической жизнеспособности матки после некроза эндометрия, поскольку артерии диаметром более 2 мм на температурное воздействие не реагируют и обеспечивают интактность кровообращения в миометрии [4]. В таких случаях удаление слизистой оболочки

матки, являющейся безусловным субстратом для развития гиперплазии, а в последующем и рака эндометрия, позволяет с высокой степенью вероятности исключить возможное рецидивирование гиперпластических процессов эндометрия и обеспечить профилактику онкологических заболеваний.

Проведение электродеструкции эндометрия после гормональной или механической подготовки показало, что выбор одного из этих методов не оказывает решающее значение на результаты абляции.

Вместе с тем использование механической подготовки позволяет применять электродеструкцию эндометрия у женщин с противопоказанием к использованию гормональных средств, а также сократить время предоперационной подготовки на 3-5 дней, вместо 4-6 недель, требуемых для гормональной супрессии.

В послеоперационном периоде нами не было отмечено ухудшение общего состояния, вегетососудистых или нервно-психических расстройств ни у одной из пациенток. Все прооперированные больные находились в стационаре не более 4-5 дней, возвращались к бытовой деятельности через сутки.

Среди осложнений послеоперационного периода, частота которых составляла 7,6%, встречался эндомиометрит (1,9%) и отсроченные кровотечения (5,7%). Все осложнения были своевременно диагностированы и ликвидированы с помощью этиопатогенетической терапии. При этом, несмотря на малую частоту инфекционно-воспалительных осложнений после абляции эндометрия, мы рекомендуем профилактическое введение антибиотиков широкого спектра действия интраоперационно и в раннем послеоперационном периоде.

Поздние послеоперационные кровотечения, возникающие на 3-4 неделе после абляции эндометрия, являются не столько осложнением, сколько проявлением закономерного процесса отторжения струпа, сформировавшегося на

стенках полости матки в результате коагуляционного некроза эндометрия под воздействием электрического тока. Во всех случаях кровотечение останавливалось после проведения консервативной гемостатической терапии. Повторная регенерация эндометрия после абляции наблюдалась редко и в основном в области трубных углов (3,8%), что, по-видимому, связано с техническими особенностями операции: из-за высокого риска перфорации в этой зоне использовался электрод с мощностью тока 60-75 Вт.

**Заключение**

Подводя итоги результатов собственного исследования и приведенных в литературе данных, можно заключить, что электродеструкция эндометрия при различных формах его гиперплазии у женщин перименопаузального возраста имеет преимущества перед гормональным лечением, не имеет противопоказаний и лишена побочных действий.

**ԱՄՓՈՓՈՒՄ**

**Էնդոմետրիումի էլեկտրադեստրուկցիան՝ որպես արգանդի լորձաթաղանթի հիպերպլաստիկ փոփոխությամբ շուրջըշաշտանադադարային տարիքի կանանց արդյունավետ բուժում**  
Գր. Գ. Օկոև (Մոր և մանկան առողջության պահպանման գիտական կենտրոն)

**Չետազոտության նպատակը.** Ուսումնասիրել էնդոմետրիումի էլեկտրադեստրուկցիայի արդյունավետությունը կլինիկական և գերծայնային հետազոտության տվյալներով:

**Չետազոտության նյութն ու մեթոդաբանությունը.** Էնդոմետրիումի էլեկտրադեստրուկցիա կատարվել է 53 կնոջ, որոնց մոտ առկա են եղել էնդոմետրիումի հիպերպլաստիկ փոփոխությունների ձևաբանական (մորֆոլոգիական) տարբեր ձևեր:

**Չետազոտության արդյունքները.** Միջամտությունից 3 ամիս անց կանանց 77,4% մոտ դիտվել է դաշտանի բացակայություն, 22,6%՝ հիպոմենորեա: Իսկ 12 ամիս անց ամենորեան առկա էր 84,9% կանանց մոտ, իսկ հիպոմենորեան՝ 15,1% մոտ: 3,8% դեպքում գերծայնային քննությամբ հայտնաբերվել են արգանդի լորձաթաղանթի հատվածներ, որոնք սովորաբար տեղակայված էին փոդային անկյունում: Մնացած 96,2%-ում արգանդի խոռոչը նկարագրվել է որպես շատ բարակ հիպերէխոգեն գիծ: Չիստերէկտոմիա կատարվել է միայն 2 (3,8%) դեպքում՝ կրկնվող արգանդային արյունահոսությունների կապակցությամբ:

**Եզրակացություն.** Արգանդի լորձաթաղանթի հիպերպլաստիկ փոփոխություններ ունեցող շուրջըշաշտանադադարային տարիքի կանանց համար էնդոմետրիումի էլեկտրադեստրուկցիան իր արդյունավետությամբ համեմատելի է ռադիկալ վիրահատությունների հետ, ինչպես նաև ավելի անվտանգ և տնտեսապես շահավետ միջամտություն է:

**Հիմնական բառեր.** Էնդոմետրիումի էլեկտրադեստրուկցիա, էնդոմետրիումի հիպերպլազիա:

**SUMMARY**

**Endometrial electrodestruction: an effective treatment of endometrial hyperplasia in perimenopausal women**

Gr. G. Okoev (Research Center of Maternal and Child Health Protection)

**Objectives:** To evaluate the effectiveness of endometrial electrodestruction based on data from clinical and ultrasound investigations.

**Material and methodology:** Endometrial electrodestruction was performed in 53 women with different morphological types of endometrial hyperplasia.

**Results:** In the 3rd postoperative month amenorrhea was detected in 77.4%, and hypomenorrhea in 22.6% of women. In a year after operation amenorrhea was detected in 84.9%, and hypomenorrhea in 15.1% of women. In 3.8% cases ultrasound revealed endometrial fragments with typical localizations in tubal angles. In 96.2% of cases uterine cavity was visualized as a thin hyperechoic stria. Due to recidivating uterine hemorrhage 2 women (3.8%) underwent hysterectomy.

**Conclusion:** The effectiveness of endometrial electrodestruction in women at perimenopausal ages with endometrial hyperplasia is comparable with the same of radical surgery, but shows higher safety and cost effectiveness.

**Key words:** endometrial electrodestruction, endometrial hyperplasia.

Электродеструкция при гиперпластических процессах эндометрия у женщин перименопаузального возраста по своей эффективности сравнима с радикальным хирургическим лечением, является более экономичной и безопасной и может быть рекомендована для широкого практического применения в лечебных учреждениях гинекологического профиля.

**Литература**

1. Гинекология. Под ред. Савельевой Г.М., Брусенко М. ГЭО-ТАР-Медиа.2005.с.233-259.
2. Адамян Л.В. Минимальная инвазивная хирургия в гинекологической практике \ \ Акушерство и гинекология. 2006. Приложение. с.11-17.
3. Рубченко Т.И., Лукашенко С.Ю. Клинико-метаболические последствия гистерэктомии и возможность их гормональной коррекции \ \ Проблемы репродукции. 2003.3. с.66-72
4. Hieng M. Ovigsted E. Sendvik K. et al.Hysteroscopic resection of symptomatic and asymptomatic endometrial polyps\ \ J. Minim Invasive Gynecol.2007 Mar-Apr; 19(2) p.189-194
5. Edris F.,Vilos G.A.,Al- Muborak A.et al. Resectopic surgery may be an alternative to hysterectomy in high-risk women which atypical endometrial hyperplasia.J Minim Invasive Gynecol. 2007 Jan-Feb 14(1) p.68-73

### ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Գ.Ա.Բեգլարյան, Ա.Է.Խոնդկարյան, Ա.Գ.Հարությունյան, Ռ.Մ.Գրիգորյան

#### Ձվարանի հսկա կիստոմա. հազվադեպ հանդիպող կլինիկական դեպքի նկարագրություն

Ընտանիքի պլանավորման և սեռական առողջության կենտրոն Մ.Հերացու անվան ԵրՊԲՀ մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 1 ամբիոն

Ձվարանի ուռուցքները կանանց սեռական օրգաններում ամենահաճախ հանդիպող նորագոյացություններն են, որոնք գինեկոլոգիական հիվանդությունների 6-8%-ն են կազմում:

Առավել շատ հանդիպում են էպիթելային ծագման բարորակ ուռուցքները՝ կիստոմաները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ շճային ու լորձային (մուցինոզ), և աչքի են ընկնում արագ աճով:

Մուցինոզ ցիստադենոման (պսևդոմուցինոզ կիստոմա) համարվում է ձվարանի ամենախոշոր ուռուցքը, երբեմն գրավում է որովայնի ամբողջ խոռոչը, թմբիկավոր է, բազմախոռոչային, թանձր ժելատինանման, լորձանման պարունակությամբ, հաճախ միակողմանի: Խոռոչների մեջ կան միջնապատեր, ծածկված գլանաձև էպիթելով, որը հիշեցնում է արգանդի պարանոցային խողովակի էպիթելը:

Ցիստադենոմայի որոշ տարատեսակներ հակում ունեն չարորակացման: Ձվարանի քաղցկեղի 70%-ը հետևանք է պտկիկային ցիստադենոմայի չարորակացման, գերազանցապես հանդիպում է 50-60 տարեկան կանանց մոտ:

Սույն հոդվածում ներկայացնում ենք գիզանտ (հսկա) կիստոմայով հիվանդի: Հիվանդ Վ.-ն 53 տարեկան է, ընդունվել է Ընտանիքի պլանավորման և սեռական առողջության կենտրոն (ԸՊ և ՍԱԿ) օպերատիվ գինեկոլոգիայի բաժանմունք՝ զանգատվելով հաճախամիզությունից, դեֆեկացիայի խանգարումից (մոտ 1,5-2 տարի), շնչահեղձությունից, ընդհանուր թուլությունից, ժամանակ առ ժամանակ աչք թուլակողում ցավերից, որովայնի շրջագծի մեծացումից (վերջին 1 տարվա ընթացքում):

Ձվարանի կիստան հայտնաբերվել է 2003թ.՝ կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) ստուգման ժամանակ, որի կապակցությամբ ստացել է բուսաբուժություն: Բուժման անարդյունավետության հետևանքով հիվանդին առաջարկվել է վիրահատություն, սակայն նա հրաժարվել է: Դինամիկայում մի քանի անգամ

կատարվել է ուլտրաձայնային հետազոտություն և ախտորոշվել է ձվարանի կիստոմա, լեղաքարային հիվանդություն: 2008թ. ԱՄՆ-ում կատարված մագնիսամիջուկային ռեզոնանս հետազոտության ժամանակ հայտնաբերվել է ձվարանի հսկա կիստոմա՝ առանց չարորակացման կասկածի, որը զբաղեցնում է ամբողջ որովայնի խոռոչը, սակայն ոչ մի միջամտություն չի կատարվել: Վերը նշված գանգատները շարունակվել են, որի կապակցությամբ հիվանդը դիմել է ԸՊ և ՍԱԿ օպերատիվ գինեկոլոգիայի բաժանմունք:

Անամնեզում աճը և զարգացումը ընթացել է նորմալ. մենարխեան 12 տարեկանից, 3-4/30 կանոնավոր, չափավոր, անցավ, դաշտանադադարը 1,5 տարի առաջ: Սեռական կյանքով ապրում է 33 տարեկանից: Անամնեզում ունեցել է երեք հղիություն, որից երկուսն ավարտվել է ինքնաբեր վիժմամբ, մեկը՝ ժամկետային ծննդաբերությամբ (1990թ.), որը ավարտվել է կորպորալ կեսարյան հատումով՝ հսկա պտղի (5000գ քաշ) կապակցությամբ: Հիվանդը նշել է նաև վահանաձև գեղձի խպիպի վիրահատություն: Ընդունվելիս ընհանուր վիճակը բավարար է, մաշկը և տեսանելի լորձաթաղանթները՝ նորմալ գունավորման: Ենթամաշկային ճարպաբջջանքն արտահայտված է, որովայնի առաջնային պատը կախված է գոգնոցի ձևով, դիտվում է III-IV<sup>o</sup>-ի ճարպակալում: Որովայնի առաջնային պատին առկա է երկայնական հետվիրահատական սպի միջև թրածն ելուն և արտահայտված պորտային ճողվածք:

Կատարվել է հեշտոցային քննություն. հեշտոցանուղու ազատ է, հեշտոցը՝ չծննդաբերած կնոջ, արգանդի պարանոցը կոնաձև է, լորձաթաղանթն առանց շեղումների:

Արգանդի մարմինն ու հավելումներն առանձին չեն շոշափվում մեծ չափերի գոյացության պատճառով, որը զբաղեցնում է փոքր կոնքի և որովայնի խոռոչները: Արտադրությունը սեռական ճեղքից լորձային է, չափավոր քանակությամբ:

Ախտորոշվել է՝ ձվարանի հսկա բազմախոռոչանի կիստոմա, - ձվարանի ադենոկարցինոմա (կասկած), - լեղաքարային հիվանդություն, - պորտային ճողվածք, - ճարպակալում՝ III –IV<sup>o</sup>:

Նկատի ունենալով մեծ չափերի գոյացության առկայությունը, որը հանգեցրել էր հարևան օրգան-համակարգերի ֆունկցիայի խանգարմանը, որոշվեց հիվանդին նախապատրաստել վիրահատություն: Կատարվել են բոլոր անհրաժեշտ կլինիկալաբորատոր հետազոտությունները (օմկոցիտոլոգիան և CA-125՝ առանց շեղումների):

Ըստ ուլտրաձայնային հետազոտության, լեղապարկի տեղակայումը և ձևը նորմալ է: Մարմնի և հատակի մասում երևում է խոշոր կոնկրեմենտ 3,5սմ չափի, լյարդը դիֆուզ (հիպերէխոգեն)՝ ի հաշիվ ճարպային լիպոդիստրոֆիայի: Լեղու հոսքը դժվարացած է: Փոքր կոնքի և որովայնի խոռոչներում երևում է խոշոր հեղուկային գոյացություն, որը դուրս է գալիս աչք ձվարանից՝ 30x30սմ: ոյացության ներսում առկա են բազմակի միջնապատեր՝ 3-6սմ հաստությամբ, դուստր կիստաների ձևավորմամբ:

Եզրակացություն՝ աչք ձվարանի պապիլյար պսևդոմուցինոզ ցիստադենոմա (կիստոմա):

Կլինիկալաբորատոր հետազոտություններից հետո կատարվեց վիրահատություն:

Որովայնահատում՝ աջակողմյան հսկա կիստոմայի հեռացում, արգանդի ամպուտացիա՝ հավելումներով և արգանդի պարանոցի լորձաթաղանթի հեռացումով, մեծ ճարպուրի ռեզեկցիա, պորտային ճողվածքի վերականգնում, խլեցիստէկտոմիա, որովայնի խոռոչի դրենավորում:

Կատարվեց հին սպիի հեռացումով երկայնական կտրվածք՝ ցայլքից մինչև թրածն ելուն: Որովայնի խոռոչը բացվեց շերտ առ շերտ և անմիջապես վերքի մեջ երևաց մեծ գոյացություն՝ կատաղույն երանգով, որը գրավել էր ամբողջ որովայնի խոռոչը՝ հասնելով մինչև թրածն ելուն: Վիրախժուժների (տամպոն) օգնությամբ ուռուցքի սահմաններն առանձնացվեցին շրջակա հյուսվածքներից: Կիստոմայի առաջնային պատի վրա կատարվեց փոքր կտրվածք՝ 1,5-2սմ, և կիստոմայի երկու խոռոչից դանդաղ արտածծվեց մոտավորապես 8,5լմուզ գույնի հեղուկ, որից հետո զգուշությամբ կիստոման դուրս բերվեց վերքի մեջ:

Կիստոմայի ոտիկն իրենից ներկայացնում էր կոնք-ծագարային կապանը, արգանդի կլոր և լայն կապանները, աչք արգանդափողը: Առկա էր ոտիկի մասնակի ոլորում, որը կալումներ ուներ շրջակա

հյուսվածքների հետ: Կիստոմայի ներքևի աչք հատվածը գտնվում էր ինտրալիգամենտար՝ անոթային խրձի և աչք միզածորանի վրա, կիստոմայի ոտիկն այտուցված էր, հաստացած, 5-6սմ հատվածում կապտագույն երանգով: Կալումներն անջատելուց հետո ուռուցքը զգուշությամբ հեռացվեց:

Հեռացման ժամանակ աչքից իմբիբիցիայի ենթարկված հյուսվածքներից սկսեց առատ արյունահոսել, որից ելնելով դրվեց սեղմող տամպոն (խժուժ), հետագայում թողնելով մեկ դրենաժ: Կատարվեց պարանետրիումի (շրջարգանդի) բջջանքի վերաքննում և ստուգվեց միզածորանի ուղղվածությունը՝ վերջինիս տոպոգրաֆիան (տեղագրությունը) հավանաբար ուռուցքի ճնշման հետևանքով խախտված էր: Որովայնի խոռոչում առկա էր 550-600մլ բաց դեղնագույն հեղուկ՝ թերևս բորբոքային բնույթի: Ստուգվեց որդանման ելունը, որը գտնվում էր նորմալ տեղակայման մեջ, ուռուցքի հետ առանց կալումների:

Կատարվեց արգանդի և ձախ հավելումների վերստուգում (ռեվիզիա), ըստ որի արգանդի մարմինը մեծացած էր 15 շաբաթական հղիության չափով՝ սուբսերոզ, ինտերստիցիալ երկու հանգույցով, որոնք գտնվում էին արգանդի հատակի շրջանում՝ աջից, համապատասխանաբար 6x6,5սմ և 5x5սմ չափերով: Արգանդի վրա առկա էր երկայնական, ոլորածև հետվիրահատական սպի, որը ներքին սեզմենտի վերին հատվածից հասնում էր մինչև արգանդի հատակ և կալումներ ուներ ձախ հավելումների հետ: Ձախ ձվարանը կիստոդեգեներացված էր՝ 6x5,5սմ չափով: Առկա էր միզապարկի սերտ կալում արգանդի առաջնային պատին: Չգուշությամբ, սուր և բուք կերպով միզապարկի հետին պատն անջատվեց կալումից:

Կատարվեց արգանդի ամպուտացիա՝ արգանդի պարանոցի լորձաթաղանթի հեռացումով և ձախ հավելումներով: Մեծ ճարպոնը հաստացած էր և որոշ մասը սեղմված պորտային օղի մեջ, վերջինս անջատվեց և հեռացվեց (մակրոսկոպիկ անփոփոխ): Այնուհետև, վիրաբույժ հրավիրվեց և կատարվեց լեղապարկի հեռացում, որից հետո վիրահատությունը շարունակվեց՝ կատարելով պորտային ճողվածքի վերականգնում: Որովայնի խոռոչի և բոլոր օրգանների վերստուգում իրականացվեց, ըստ որի՝ տեսանելի և պալպատոր ոչ մի ախտաբանական փոփոխություն չհայտնաբերվեց:

Դուզլասյան տարածությունում, փոքր կոնքի խոռոչի բջջանքում՝ աչքից, հեռացված լեղապարկի շրջանում՝ աչք զստափոսում դրենաժներ թողնվեցին: Կատարվեց որովայնի խոռոչի վնասում հակամեխիզ (ասեպտիկ) լուծույթով: Որովայնի խոռոչը փակվեց շերտ առ շերտ: Մաշկին դրվեցին վիկրիլա հանգուցակարեր՝ ըստ Դոնատիի, ասեպտիկ վիրակապ,



մեզը՝ պարզ, մաքուր, մշտական կատետրով, մոտ 250-300մլ: Արյան ընդհանուր կորուստը՝ մոտ 400մլ:

Մակրոպրեպարատ՝ աջ ձվարանի հսկա բազմախոռոչանի կիստոմա հասուն հղիության չափով: Բացի հեռացված 8,5լ մուգ գույնի հեղուկից, կիստոմայի խոռոչներում առկա էր 25լ ժելատինաման, մուգ գույնի հեղուկ: Կիստոման՝ ինվերտիվ աճով, հաստացած պատերով: Ծայրատի մասում առկա էր 5,5-6սմ տրամագծով անհամաչափ (պինդ և փափուկ) կոնսիստենցիայի գոյացություն՝ չարորակացման կասկածով: Հեռացված կիստոման կշռում էր 25,5կգ՝ առանց հեռացված հեղուկի (նկ. 1, 2\*):

Մակրոսկոպիկ արզանդը մեծացած էր 15 շաբաթական հղիության չափով՝ սուբսերոզ, ինտերստիցիալ երկու հանգույցով, համապատասխանաբար 6x6,5սմ և 5x5սմ չափերով: Արզանդի վրա առկա էր երկայնական, ուղրածն հետվիրահատական սպի: Արզանդի պարանոցի հեռացված լորձաթաղանթ: Կիստոդեգեներացված ձախ ձվարան 6x5,5սմ չափով: Ռեզեկցված մեծ ճարպոն: Կալկուլյոզ խլեցիստիտ:

Հետվիրահատական ախտորոշում՝ աջ ձվարանի հսկա բազմախոռոչանի կիստոմա՝ ոտիկի մասնակի ուղորումով, - ձվարանի ադենոկարցինոմա (կասկած), - արզանդի սուբսերոզ, ինտերստիցիալ միոմա 15 շաբաթական հղիության չափով,

- ձախ ձվարանի կիստոդեգեներացիա,
- պորտային ճողվածք,
- կալկուլյոզ խլեցիստիտ,
- ճարպակալում՝ III-IV<sup>o</sup>:

Վիրահատությունը տևել է 5 ժամ: Այն անցել է հարթ, առանց բարդությունների: Վերը նկարագրված մակրոպրեպարատն ուղարկվել է պաթոհիստոլոգիական հետազոտության:

Պաթոհիստոլոգիական հետազոտություն՝ մուցինոզ ցիստադենոկարցինոմայի օջախ միկրոհիվազիալով, աջ ձվարանի սահմանային բազմախոռոչանի մուցինոզ ցիստադենոմայում (առավելապես ինտեստինալ՝ տեղ-տեղ էնդոցերվիկալ տիպի): Երկրորդ ձվարանը սկլերոզացված է, պարունակում է փոքր սերոզ ադենոֆիբրոմա: Երկկողմանի խրոնիկական սալպինգոօֆորիտ, Վալտիսարդի բներ: Արզանդի դիֆուզ միոմատոզ, չափավոր արտահայտված ներքին էնդոմետրիոզ, էնդոմետրիտ: Արզանդի հաստության մեջ հայտնաբերվել են հիմ կարային մատերիալի բազմաթիվ խրձեր՝ հսկա, բջջային բորբոքային ռեակցիայով: Խրոնիկական կալկուլյոզ խլեցիստիտ, օմենտիտ:

Հետվիրահատական շրջանն ընթացել է հարթ՝ հակամանրէային (հակաբակտերիալ), հակաանեմիկ բուժման ֆոնի վրա: Հիվանդը դուրս է գրվել 12-րդ օրը բավարար վիճակում: Ուղարկվել է օնկոլոգի հսկողության տակ՝ հետագա քիմիաթերապիայի:

\*Նկարները տես ներդիրում

## ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ

Մ.Ս.Հակոբյան

### Թոքերի խրոնիկական հիվանդության դեպքում պոստնատալ կորտիկոստերոիդների կիրառումն անհասների մոտ

(համակարգված վերլուծությունների հիման վրա)  
ԱՄՆ ՄՁ ՆՕՎԱ ծրագիր

**Հետազոտության նպատակը.** Գնահատել կորտիկոստերոիդների (ներերակային, օրալ կամ ներշնչական) օգտագործման առավելություններն ու կողմնակի ազդեցությունները թոքերի խրոնիկական հիվանդություն (ԹԽՅ) ունեցող կամ դրա զարգացման վտանգի տակ գտնվող անհաս նորածինների առողջական ցուցանիշների վրա:

**Հետազոտության նյութն ու մեթոդաբանությունը.** Վերանայվել են Քոքրեյնի վերահսկվող ուսումնասիրությունների կենտրոնական գրանցման համակարգի, Օքսֆորդի պերինատալ հետազոտությունների տվյալների բազաները, Մեդլայնը (1966-2007), մանկաբուժության և պերինատալոգիայի ամսագրեր: Տվյալ վերլուծության համար ընտրվել են պատահականորեն վերահսկվող բոլոր այն հետազոտությունները, որոնցում համեմատվել է անհաս/ցածր քաշով նորածիններին ԹԽՅ-ի բուժման կամ կանխարգելման նպատակով կորտիկոստերոիդների նշանակումը պլացենտի կամ միջամտության բացակայության հետ:

**Հետազոտության արդյունքները.** Համակարգված վերլուծությունները ցույց են տալիս, որ կորտիկոստերոիդային թերապիայի առավելությունները կարող են չզերազանցել կողմնակի ազդեցությունները: Ներշնչական ճանապարհով ներմուծվող կորտիկոստերոիդները (անկախ ներմուծման ժամկետից) ոչ մի առավելություն չունեն օրալ կամ ներերակային եղանակով տրվող ստերոիդների նկատմամբ:

**Եզրակացություն.** Ոչ ներշնչական և ոչ էլ ներերակային/օրալ կորտիկոստերոիդները խորհուրդ չեն տրվում որպես ստանդարտ բուժում ԹԽՅ-ի կանխարգելման համար: Հետագա հետազոտություններ են անհրաժեշտ՝ պարզելու ստերոիդների երկարաժամկետ ազդեցությունները երեխայի նյարդային համակարգի վրա: Կարիք կլինի ուսումնասիրել նաև տարբեր եղանակներով, դեղաչափերով և տևողությամբ նշանակվող ստերոիդների արդյունավետությունը և երկարաժամկետ ազդեցությունը:

**Հիմնական բառեր.** թոքերի խրոնիկական հիվանդություն, անհաս նորածին, ցածր քաշով նորածին, կորտիկոստերոիդներ, արիեստական օդափոխություն, կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցություն:

### Հիմնախնդիրը

Թոքերի խրոնիկական հիվանդությունը (ԹԽՅ) շարունակում է խնդիր մնալ շատ ցածր քաշ ունեցող նորածինների և ինտենսիվ թերապիայում բուժված նորածինների համար [1]: Սուրֆանկտանտային թերապիան բարելավել է շնչառական դիստրես համախտանիշով երեխաների առողջական ելքը, սակայն այն չնչին է իջեցրել թոքերի խրոնիկ հիվանդության կամ բրոնխաթոքային դիսպլազիայի զարգացման վտանգը [2]: Թոքերի խրոնիկ հիվանդություն (ԹԽՅ) և բրոնխաթոքային դիսպլազիա եզրույթները հաճախ օգտագործվում են մեկը մյուսի փոխարեն, այդ իսկ պատճառով տվյալ վերլուծության մեջ օգտագործվել է ԹԽՅ եզրույթը՝ բնութագրելու բոլոր այն նորածիններին, որոնք թթվածնային կախվածություն ունեն մինչև կյանքի 28-րդ օրը կամ գեստացիոն 36 շաբաթը [2]: Շատ ցածր քաշով նորածինների մոտ ԹԽՅ-ի զարգացման հավանականությունը տատանվում է 23-26%-ի սահմաններում և մեծապես կախված է գեստացիոն ժամկետից և ծնված քաշից [3]: Պոստնատալ կորտիկոստերոիդների օգտագործումն արդյունավետ է արդեն իսկ առկա ԹԽՅ-ի դեպքում, հատկապես արիեստական շնչառության սարքի տակ գտնվող նորածինների մոտ: Սակայն մտահոգություն կա կորտիկոստերոիդների կարճաժամկետ և երկարաժամկետ կողմնակի ազդեցությունների վերաբերյալ [3], ինչպես՝ հիպերգլիկեմիան, հիպերթենզիան, ստամոքսաղիքային արյունահոսությունը, թափածակումը (պերֆորացիան) և այլն [3]:

Վերջին ժամանակներում կորտիկոստերոիդները

սկսել են օգտագործել նորածնի կյանքի առաջին օրերից՝ վտանգի տակ գտնվող անհասների մոտ ԹԽՅ-ի զարգացումը կանխարգելելու նպատակով: Դեռևս պարզ չէ ստերոիդների վաղ օգտագործման առավելությունը: Մտահոգություն կա՝ արդյոք կորտիկոստերոիդների առավելությունները զերազանցում են կողմնակի ազդեցությունները [4]: Մի քանի հետազոտություն, որոնք միտված էին գնահատելու ոչ ներշնչական դեքսամետազոնով բուժված նորածինների առողջական վիճակը միջամտությունից մի քանի տարի անց, ցույց են տվել նյարդային համակարգի զարգացման շեղումների բարձր ցուցանիշներ [3]: Անհաս կենդանիների վրա կատարված կլինիկական հետազոտությունները նույնպես ցույց են տվել կորտիկոստերոիդների բացասական ազդեցությունը նյարդային համակարգի վրա [2]: Անհրաժեշտություն կա ուսումնասիրելու այլընտրանքային ճանապարհով կորտիկոստերոիդների ներմուծման առավելություններն ու կողմնակի ազդեցությունները [3]:

### Վերլուծության նպատակը

Գնահատել կորտիկոստերոիդների օգտագործման առավելություններն ու կողմնակի ազդեցությունները ԹԽՅ ունեցող կամ դրա զարգացման վտանգի տակ գտնվող անհաս նորածինների առողջական ցուցանիշների վրա:

### Ընտրված ռազմավարությունը

Մեր կողմից ուսումնասիրվել են չորս ծավալուն հետազոտության արդյունքները՝ Քոքրեյնի վերահսկվող ուսումնասիրությունների կենտրոնական գրանցման համակարգի, Օքսֆորդի պերինատալ հե-

տազոտությունների տվյալների բազաները, Մեդլայնը (1966-2007), մանկաբուժության և պերինատալոգիայի ամսագրերը: Վերլուծվել է թվով 40 հետազոտություն, որոնք նպատակաուղղված էին գնահատելու կորտիկոստերոիդների արդյունավետությունն անհաս/ցածր քաշով նորածինների համար:

**Ընտրության ցուցանիշը**

Տվյալ վերլուծության համար ընտրվել են պատահականորեն վերահսկվող բոլոր այն հետազոտությունները, որոնցում անհաս/ցածր քաշով նորածիններին թխ՜-ի բուժման կամ կանխարգելման նպատակով տրվել են ներերակային, օրալ կամ ներշնչական կորտիկոստերոիդներ: Մասնակիցները բաժանվել են երկու խմբի՝ միջամտություն ստացող և ստուգիչ: Միջամտությունը կորտիկոստերոիդների վերը նշված որևէ եղանակով ներմուծումն է եղել: Ստուգիչ խմբին տրվել է պլացեբո կամ ոչինչ չի տրվել: Ուսումնասիրվել են դեղերի ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հետևանքները նորածին առողջական ցուցանիշների վրա:

**Տվյալների հավաքագրում և վերլուծություն**

Ուսումնասիրության արդյունքները վերլուծվել են մեթա-անալիզի եղանակով: Օգտագործվել են կարգային տվյալների համար հարաբերական ռիսկը և շարունակական տվյալների համար կշռված միջին տարբերությունը:

**Հիմնական արդյունքները**

Վերլուծություններից մեկը, որում ուսումնասիրվել է վաղ պոստնատալ շրջանում կորտիկոստերոիդների օգտագործումը (մինչև 96 ժամը), ներառել է 21 հետազոտություն, ուր ընդգրկված է եղել 3072 նորածին [4]: Կորտիկոստերոիդներ ստացող և չստացող խմբերի համեմատությունը ցույց է տվել, որ ստերոիդների վաղ նշանակումն իջեցնում է թխ՜-ի զարգացման հավանականությունը 28 օրական (հարաբերական ռիսկը (RR)՝ 0,85, 95% հավաստիության միջակայք (CI)՝ 0,79-ից 0,92) և գեստացիոն 36 շաբաթական (RR 0,69, 95% CI 0,6-ից 0,8) հասակում, մահվան կամ թխ՜-ի հավանականությունը 28 օրական (RR՝ 0,91, 95% CI՝ 0,86-ից 0,96) և գեստացիոն 36 շաբաթական (RR 0,86, 95% CI 0,79-ից 0,94) հասակում, էքստրաբրախիալ ծախսումն ցուցանիշը 3 օրականում (RR 0,73, 95% CI 0,62-ից 0,86), 7 օրականում (RR 0,76, 95% CI 0,66-ից 0,88), 14 օրականում (RR 0,77, 95% CI 0,62-ից 0,97) և 28 օրականում ( RR 0,84, 95% CI 0,72-ից 0,99): Ստերոիդների օգտագործումից բարձրանում է հիպերգլիկեմիայի (RR 0,84, 95% CI 0,72-ից 0,99), հիպերթենզիայի ( RR 1,84, 95% CI 1,54-ից 2,21), ստամոքսաղիքային արյունահոսության (RR 0,84, 95% CI 0,72-ից 0,99), աղիների թափածակման (RR 1,98, 95% CI 1,32-ից 2,95) վտանգը: Երկու խմբի միջև նշանակալի տարբերություններ չեն գրանցվել անհասների ռետինոպաթիայի զարգացման արդ-

յունքում (RR 0,86, 95% CI 0,73-ից 1,02), այնուամենայնիվ՝ իջել է ծանր ռետինոպաթիայի զարգացման վտանգը (RR 0,76, 95% CI 0,59-ից 0,98): Հետազոտությունների համաձայն պոստնատալ ստերոիդային բուժումը չի իջեցնում մահացությունը 28 օրականում (RR 1,05, 95% CI 0,90-ից 1,22), մահացությունը դուրս գրումից առաջ (RR 1,02, 95% CI 0,90-ից 1,17), նշանակալի ազդեցություն չունի վարակների (RR 1,01, 95% CI 0,90-ից 1,14), թոքային արյունահոսության (RR 1,10, 95% CI 0,77-ից 1,57) վրա: Հետագա հսկիչ հետազոտությունների համաձայն մինչև 96 ժամական անհաս նորածինն կորտիկոստերոիդների ներմուծումը բարձրացնում է ուղեղի կաթվածի (RR 1,10, 95% CI 0,77-ից 1,57), նյարդաբանական հետազոտության ոչ օրինաչափ արդյունքների (RR 1,81, 95% CI 1,33-ից 2,47) վտանգը: Նշանակալի տարբերություններ չեն նկատվել նյարդազգայական շեղումների առումով (RR 1,16, 95% CI 0,89-ից 1,52): Մեկ հետազոտություն (n=248) ցույց է տվել զարգացման դանդաղում ստերոիդներ ստացածների մոտ (RR 1,68, 95% CI 1,08-ից 2,61):

Մյուս վերլուծության մեջ ուսումնասիրվել է անհասների թխ՜-ն բուժելու համար 3 շաբաթականից հետո կորտիկոստերոիդների նշանակումը [2]: Այն ներառել է 9 հետազոտություն՝ 562 մասնակցով: Ըստ հետազոտությունների արդյունքների՝ ստերոիդների ուշ նշանակումն էական ազդեցություն չունի մինչև դուրս գրումը մահացության (RR 1,03, 95% CI 0,71-ից 1,51) կամ դրանից հետո, ավելի ուշ շրջանում մահացության վրա (RR 0,99, 95% CI 0,71-ից 1,39): Միայն մի հետազոտության մեջ է նշվել, որ ստերոիդների ուշ կիրառումը գեստացիոն 36 շաբաթում սահմանային նշանակությամբ իջեցնում է թխ՜-ի ելքը (RR 0,76, 95% CI 0,58-ից 1,00), ինչպես նաև ստերոիդների հետագա օգտագործման (RR 0,40, 95% CI 0,28-ից 0,57) անհրաժեշտությունը: Հետազոտությունների համաձայն էքստրաբրախիալ ծախսումը նշանակալիորեն իջնում է 7 օրականում (RR 0,69, 95% CI 0,58-ից 0,82), 28 օրականում (RR 0,55, 95% CI 0,33-ից 0,90), սակայն այն չի փոփոխում էքստրաբրախիալ հաջողությունը 3 և 14 օրականում:

Վեց հետազոտության արդյունքներ մատնանշել են, որ հիպերգլիկեմիայի վտանգը բարձրանում է, բայց ոչ նշանակալի (RR 1,42, 95% CI 0,97-ից 2,07), սակայն աճում է գլյուկոզուրիայի (RR 8,03, 95% CI 2,43-ից 26,5) և հիպերթենզիայի (RR 2,61, 95% CI 1,29-ից 5,26) վտանգը: Ստերոիդների ուշ նշանակումը չի առաջացնում աղեստամոքսային տրակտի արյունահոսությունների (RR 1,13, 95% CI 0,74-ից 1,73), մեռուկացնող (նեկրոտիզացնող) էնտերոկոլիտի (RR 2,59, 95% CI 0,61-ից 10,9) և աղիների թափածակման (RR 0,36, 95% CI 0,02-ից 8,05) ավելացում: Այն չի առաջացնում նաև վարակների նշանակալի աճ: Ընդհանուր առմամբ, 3 շաբաթականից հետո ստերոիդների նշանակումը բարձրաց-

նում է անհասների ծանր ռետինոպաթիայի վտանգը (RR 1,52, 95% CI 1,09-ից 2,12): Այս օրինաչափությունը չի նկատվում ողջ մնացածների մոտ (RR 1,41, 95% CI 0,99-ից 2,04): Հետագա հսկիչ հետազոտության տվյալները ցույց են տվել, որ ստերոիդներ ուշ ստացած երեխաների մոտ մինչև հինգ տարեկան հասակը չի դիտվել կուրության, խլության, ուղեղի կաթվածի, նյարդազգայական շեղումների էական աճ: Առկա է եղել նյարդային համակարգի հետազոտության ոչ օրինաչափ արդյունքների աճ (RR 1,90, 95% CI 1,08-ից 3,33), սակայն պարզ չէ վերջինիս կլինիկական նշանակությունը, քանի որ չի արձանագրվել ոչ ուղեղի կաթվածի և ոչ էլ նյարդազգայական շեղումների աճ:

Մեկ այլ համակարգված վերլուծություն ուսումնասիրել է 14 օրականում ներշնչական ճանապարհով տրվող ստերոիդների ազդեցությունը <1500 գր կամ <32 գեստացիոն շաբաթական, արհեստական օդափոխության տակ գտնող նորածինների վրա՝ ի տարբերություն ներերակային կորտիկոստերոիդների [3]: Վերլուծությունն ընդգրկել է 3 հետազոտություն, որոնցից որևէ մեկում երկու խմբի միջև (ներշնչական կամ ներերակային ստերոիդներ) չեն նկատվել վիճակագրորեն հավաստի տարբերություններ գեստացիոն 36 շաբաթականում և 28 օրականում թխ՜-ի հավանականության, 36 շաբաթականում կամ 28 օրականում մահվան, ինտուբացիայի տևողության, թթվածնային կախվածության տևողության կամ դեղերի կողմնակի ազդեցության մեջ:

Մյուս վերլուծությունը գնահատել է 1 մինչև 14 օրական շատ ցածր քաշով, արհեստական օդափոխության սարքավորման տակ գտնվող նորածիններին ներշնչական ճանապարհով ներմուծվող ստերոիդների առավելությունները ներերակային նկատմամբ [1]: Վերլուծության մեջ ընդգրկվել է 7 հետազոտություն: Երկու խմբում որևէ վիճակագրորեն հավաստի տարբերություններ չեն գրանցվել 36 շաբաթականում և 28 օրականում թխ՜-ի հավանականության, 36 շաբաթականում կամ 28 օրականում մահվան, ինչպես նաև առաջացած կողմնակի ազդեցությունների ցուցանիշներում:

**Եզրահանգում**

Համակարգված վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուշ նշանակված կորտիկոստերոիդային թերապիայի առավելությունները կարող են չզերազանցել դրա առաջացրած կողմնակի ազդեցությունները [2]: Արհեստական օդափոխության տակ գտնվող անհաս նորածինների դեքսամետազոնային բուժումը, որոնց մոտ արդեն իսկ զարգացել է թխ՜, բարելավում է վիճակը, արագացնում էքստրաբրախիալ ծախսումն և իջեցնում հետագա ստերոիդային բուժման կարիքը: Այնուամենայնիվ, ստերոիդային բուժումն ունի կարճաժամկետ կողմնակի ազդեցություններ, ինչպես՝ հիպերգլիկեմիան և հիպերթեն-

զիան: Առավել մտահոգիչ է դեղերի երկարաժամկետ կողմնակի ազդեցությունը՝ նորածինների ծանր ռետինոպաթիան և նյարդաբանական հետազոտությունների ոչ օրինաչափ արդյունքները [2]: Պետք է հաշվի առնել, որ հետագա հսկիչ հետազոտությունները կատարվել են երեխաների նախադպրոցական տարիքում և չկան տվյալներ ավելի մեծ հասակում նյարդազգայական զարգացման վիճակի վերաբերյալ:

Վաղ պոստնատալ ստերոիդային թերապիան նույնպես ունի կարճաժամկետ առավելություններ, ներառյալ վաղ էքստրաբրախիալ, թխ՜-ի զարգացման վտանգի նվազումը: Սակայն քիչ չեն նաև բուժման կարճաժամկետ և երկարաժամկետ կողմնակի ազդեցությունները [4]: Դրանցից են աղեստամոքսային արյունահոսությունը, աղիների թափածակումը, հիպերգլիկեմիան և հիպերթենզիան, նյարդաբանական հետազոտությունների ոչ օրինաչափ արդյունքները և ուղեղի կաթվածը: Այսպիսով, հաշվի առնելով վաղ նեոնատալ կորտիկոստերոիդային բուժման թե առավելությունները, թե կարճաժամկետ և երկարաժամկետ կողմնակի ազդեցությունները, խորհուրդ չի տրվում այն համընդհանուր կերպով օգտագործել թխ՜-ի կանխարգելման համար: Վերլուծության արդյունքները մատնանշում են նաև, որ ներշնչական ճանապարհով ներմուծվող կորտիկոստերոիդները (անկախ ներմուծման ժամկետից) ոչ մի առավելություն չունեն օրալ կամ ներերակային ճանապարհով տրվող ստերոիդների նկատմամբ [1, 3]: Ապացուցված չեն ներշնչական ճանապարհով տրվող ստերոիդների առավելությունները կողմնակի ազդեցությունների տեսակետից: Ուստի, ոչ ներշնչական և ոչ էլ ներերակային/օրալ կորտիկոստերոիդները խորհուրդ չեն տրվում որպես ստանդարտ բուժում թխ՜-ի կանխարգելման համար [3]: Այնուամենայնիվ, անհրաժեշտ են հետագա հետազոտություններ նյարդային համակարգի վրա ստերոիդների երկարաժամկետ ազդեցությունները պարզելու համար: Կարիք կլինի ուսումնասիրել տարբեր եղանակներով, դեղաչափերով և տևողությամբ ստերոիդների արդյունավետությունը և երկարաժամկետ ազդեցությունը [2, 3, 4]:

**Գրականություն**

1. Shah VS, Ohlsson A, Halliday HL, Dunn M. Early administration of inhaled corticosteroids for preventing chronic lung disease (CLD) in ventilated very low birth weight preterm neonates. Cochrane Database of Systematic Reviews (CDSR) 2007, Issue 4.
2. Halliday HL, Ehrenkranz RA, Doyle LW. Delayed (>3 weeks) postnatal corticosteroids for CLD in preterm infants. CDSR 2003, Issue 1.
3. Shah SS, Ohlsson A, Halliday HL, Shah VS. Inhaled versus systemic corticosteroids for the treatment of CLD in ventilated very low birth weight preterm infants. CDSR 2007, Issue 4.
4. Halliday HL, Ehrenkranz RA, Doyle LW. Early postnatal (<96 hours) corticosteroids for preventing CLD in preterm infants. CDSR 2003, Issue 1.

